ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.6-2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. մարտի 24-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ

Դ.Կարապետյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ

Ա.Բաբայան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ

Հ.Սահակյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Լ.Բասմաչյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Զ.Հայրապետյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Շ.Հովսեփյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 5 (հինգ) հայտ՝

- «ԱԶԴ» ՍՊԸ-ի,
- «Նիկոն» ՍՊԸ-ի,
- «ՔՈԹԹԱ ՓԻՔՉԵՐՍ» ՍՊԸ-ի
- «Բուն» Գիտամշակութային հիմնադրամի,
- «Բաղինյան Արտ Վիդեո» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 4 (չորս) կազմակերպության՝

- «ԱԶԴ» ՍՊԸ-ի,
- «ՔՈԹԹԱ ՓԻՔՉԵՐՍ» ՍՊԸ-ի
- «Բուն» Գիտամշակութային հիմնադրամի,
- «Բաղինյան Արտ Վիդեո» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- **«ԱԶԴ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում հրավերի 2.4 կետի.

- 1-ին ենթակետով պահանջված կանոնադրության վերջին խմբագրությունը ներկայացված չէ,

- 5-րդ ենթակետով պահանջված՝ Լուսանկարների և վիդեո կոնտենտի առաջարկվող տեսլականը (վերջնական արտադրանքի լայն կոնցեպտը), ինչպես նաև ծրագրի առաջարկը չեն ներառում հրավերի 2.4.1-ին կետով պահանջված գործողությունները:

- **«ՔՈԹԹԱ ՓԻՔՉԵՐՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում՝

- հրավերի 2.3 կետի 3-րդ ենթակետի՝ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձի պահանջը պահպանված չէ,

հրավերի 2.4-րդ կետի.

- կազմակերպության գործունեության փորձը՝ պորտֆոլիոն և կազմակերպության մասնագետների (այդ թվում՝ ներգրավված) ցանկ և ինքնակենսագրականները ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ չեն ներկայացված:

- 4-րդ ենթակետով պահանջված լուսանկարների և վիդեո նկարահանումների իրականացման ծախսերի նախահաշիվը՝ իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի, գնի և դրանց համար նախատեսվող ծախսերի տեղեկատվությունը ներկայացված չէ,

- **«Բուն» Գիտամշակութային հիմնադրամի** կողմից ներկայացված հայտում ստորագրման լիազորագրի ժամկետը ուժի մեջ չէ:

Հիմնադրամի հայտում 2.4-րդ կետի՝

- 2-6-րդ ենթակետերին համապատասխան ներկայացված փաստաթղթերը՝ կազմակերպության պորտֆոլիոն, ինքնակենսագրականները, ծախսերի նախահաշիվը, տեսլականը և ԱԱՀ տեղեկանքը ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ չեն,

- 3-րդ ենթակետին համապատասխան ներկայացված ինքնակենսագրականները ֆոտո և վիդեո նկարահանումների մասնագիտական թիմի ինքնակենսագրականներ չեն (բացառություն է օպերատորի ինքնակենսագրականը), ինչը հակասում է Հրավերի 2.3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջին:

• **«Բաղինյան Արտ Վիդեո» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում պահպանված չեն՝

- Հրավերի 2.4-րդ կետով սահմանված պահանջները, այդ թվում՝

▪ կցված չէ կազմակերպության կանոնադրությունը (նոր խմբագրությամբ),

▪ ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացված չեն մի շարք փաստաթղթեր, օրինակ՝ կազմակերպության պորտֆոլիոն, ինքնակենսագրականները, լուսանկարների և վիդեո կոնտենտի առաջարկվող տեսլականը:

▪ կցված չէ ԱԱՀ-ի վերաբերյալ (եթե կազմակերպությունը աշխատում է ԱԱՀ-ով) տեղեկանքը:

Մեկի՝

• **«Նիկոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին:

Միաժամանակ, հաշվի առնելով մրցույթի արդյունքների ամփոփման ժամկետները՝ մրցութային հանձնաժողովը նպատակահարմար է գտնում առաջարկել **«Նիկոն» ՍՊԸ**-ին՝ իր կողմից ֆինանսական նախահաշվով ներկայացված վարչական ծախսեր հատվածում 11 ամսվա փոխարեն նախատեսել 9 ամսվա կտրվածք՝ չփոխելով միավորի գինը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 4 (չորս) կազմակերպության՝

• «ԱԶԴ» ՍՊԸ-ի,
• «ՔՈԹԹԱ ՓԻՔՉԵՐՍ» ՍՊԸ-ի
• «Բուն» Գիտամշակութային հիմնադրամի,
• «Բաղինյան Արտ Վիդեո» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

• **«Նիկոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը:

3. **Առաջարկել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված **«Նիկոն» ՍՊԸ-ին**՝ իր կողմից ֆինանսական նախահաշվով

ներկայացված վարչական ծախսեր հատվածում 11 ամսվա փոխարեն նախատեսել 9 ամսվա կտրվածք՝ չփոխելով միավորի գինը:

4. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Նիկոն» ՍՊԸ-ի** հետ՝ շտկված ֆինանսական նախահաշիվը ներկայացնելու դեպքում:

5. Առաջարկը ընդունելու դեպքում շտկել Ծրագրի ֆինանսական նախահաշիվը և մրցութային հանձնաժողովին՝ **մինչև 2025 թվականի ապրիլի 3-ը,** ներկայացնել շտկված տարբերակը:

6. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____